

ԱՅՍ

ՀԱՐԱՐԱԾԱԹԵՐԻ ԳԻՆԸ.

Ճարեկան գինն է 7 ուրբի (փոստի ծախսով): Օտարաբաղաճա-
ցի բաժանորդները պիտի գիտեն այս հասցեով. Bz Tiflis. Bz Pe-
tersburg. Армянской Газеты „Милан“.
Թիֆլիսում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (սրբու-
նու տուն) և Դվանովի ընթերցարանում:

ՄԱՅԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Մասնատր յայտարարութիւն ապիւ տուող պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կողմի արծաթ: Յայտարարութիւնները
տպւում են չափերէն, բուսերէն, վրացերէն, ճրանկալէն, գերմա-
ներէն և ֆրանսերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՐԱԾԱԹԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանուցում. — Կանանց ստորկուսի հան-
ճեստանը. — Երբին տեսութիւնն, Նա-
մակ Սղիսից: Նամակ բազմից, Ներքին լու-
րեր: — Սրտաքին տեսութիւնն, Եւրոպայի աշ-
խատողների ընկերութիւն: Նամակ Պարսկաստա-
նից: Արտաքին լուրեր: — Խառն լուրեր: — Մի-
սիսալ: — Առևտրական: — Յայտարարութիւններ: —
Ֆէլիէ տօն:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

„Մշակ“ լրագրի Թիֆլիսի բա-
ժանորդները թող բարեհաճեն հաս-
ցնել իրանց տարեկան վճարը կամ
խմբագրատունը, կամ Ի վանովի
ընթերցարանը:

Օտարաբաղաճացի բաժանորդ-
ները պիտի գիտեն ուղղակի խմբ-
ագրութեանը:

Խմբագրատուն „Մշակ“ լրագրի
բաց է հասարակ օրերը առաւօտեան
8 ժամից մինչև 11-ը, երեկոյեան
5-7: Կ'հրակի օրերը առաւօտեան
8-11:

ԿԱՆԱՆՑ ՍՏԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ.

I

Անհրաժեշտ ճշմարտութիւն է, որ մարդ-
կային պատմութեան ամբողջ ընթացքում
կինը կախած է եղել մարդից:
Մինչև որ հասարակութիւնը վայրենի
է, — կինը գրաստ է, երբ նա սկսում է դար-

ՖԷԼԻԷՏՈՆ

ԸՆՏԱՆԻՆԻՔԻ ԿԵՐԵՐԵՐՈՍՆԵՐ

Հաւասարութեան և ազատութեան հարցը կա-
նանց սուր քննարկի դար առաջ սկսած մշակու-
թաբանական շարժումի մէջ, և վերջապէս ներկայ
դարու առաջին կիսաբաժնում նա իւր լուծումն
ստացաւ. նորանով թէ կինը մարդկային կենսա-
յին անդամն է, ուրեմն և պիտի լինի բաժանորդ
նորա իրաւունքներին:

Բայց թէ մինչև որ աստիճան իրաւործուեցաւ
այդ հարցի վերջը լուսաւոր Եւրոպայի և Ամերի-
կայի մէջ, մինչ թողնումն էր դարս վերա խօսելը
միայն կասեմք մի քանի խօսք, թէ որպիսի ըն-
դունելութիւն գտաւ նա Հայկերի կեանքում:

Արդարեւ, մի քանի եւրոպական քաղաքներում,
որոնց թիւումն է և Թիֆլիսը, Հայերի ընտանեկան
կեանքը նոր կերպարանք ստացաւ:

Որպիսի:

Հայը դուրս բերաւ հարեմի դարերու քանդա-
կութիւնից իւր կինը, նա ձգեց նորա երեսն ծած-
կապահովութեան քողը, նա թող տուեց նորա լու-
զութիւն խօսել և մտածել օտարների հետ: Եւ սի-
րանդիլը տղամարդը, որոյ համար Հայ կինը մի
ծածկեալ զանձարան էր, պատիւ ունեցաւ հան-
դիպել նորան թաղանթներում, պարահանդէսնե-
րում, փողոցներում և ամենայն հասարակական
զբօսանքներում:

Բայց հին հարեմային դրութեան կուսակիցները
զեւռն իւր իրողութիւնն անհետացած էին: Ամէն գիւ-
ղատանում մի ծերունի պապա, կամ մի պառա-
մամա, սկսան խորթ աչքով նայել մի այդպիսի
ներքին...

զանալ և այս ինչ կամ այն ինչ ուղղու-
թիւն է ընդունում, կինը ենթարկւելով
մարդի ազդեցութեանը, նորա դրութիւնն էլ
ստանում է մարդի զարգացման համապա-
տասխան կերպարանք:

II

Մարդը վայրենի է, — կինը նորա գրաստն է:
Մարդը զինվորական մի ցեղի անդամ է, —
կինը նորա զերին է, նորա ստուգն է: Մարդը
երկրագործ է, նստողական կեանք է վարում
ունային անասուններ, վարում է հողը...
նորան հարկաւոր է աշխատող, — կինը նո-
րա ծառան է: Երկրագործը դարձեալ հա-
րատանում է, նորան հարկաւոր են աւելի շատ
օգնականներ, աւելի շատ աշխատողներ, —
նա պահում է իր համար մի կնոջ տեղ եր-
կու, ելեք կին, այսինքն երկու երեք ծա-
ռայ:

III

Մարդը դառնում է քաղաքների բնակիչ:
նա ունի իր տունը, — կինը հսկում է նորա
անային գործերը, նա անային փակված կեանք
է վարում: Մարդը դառնում է քաղաքացի, —
կինը նորա ամուսինն է և ընտանիքի մայրը...

IV

Գրաստ, գերի, ստրուկ, ծառայ, անային
օգնական, անասու, ամուսին... կնոջ դրու-
թիւնը փոխվում է, նայելով ժամանակակից
կրթութեան աստիճանին: Եւ ճշմարիտ է,
որ մի հասարակութեան մէջ կնոջ դրու-
թեանը նայելով, կարելի է եղբայրակել, կը-
թութեան որ աստիճանին հասած է և այն
հասարակութիւնը:

V

Պատմութեան ամեն երևոյթների, ամեն

նոր երևոյթի վերայ: Նորա բողոքներն այդ ըն-
տանեկան յեղափոխութեան դէմ, կոչելով նորան
լրբութիւն, շապկութիւն, անամթութիւն, մի խօս-
քով, անբարոյական մոլութիւն:

„Կրթեալ երիտասարդութիւնը“, իբրեւ գեղեցիկ
սեռի բռնաբարութեամբ իրաւունքների պաշտպան, հեր-
քեց նոցա բողոքը, մի քանի փաստերով, յիշեց դու-
րի ժամ մարդիկ էր, դուք կուրացէիք հնամուտ
թեան նախապաշարմունքներով, դուք մեղադրում էք
հաւասարութեան և ազատութեան սկզբի դէմ...

Կուսակցութիւնները կաղնուեցան, Բնականական
պատերազմը սկսուեցաւ: Այդ պատերազմը անըն-
դիկ կերպով շարունակվում է մինչև այսօր և զուցէ
ընդ երկար տեւելու էր ապագայում...

Բայց որ կողմին պէտք է արդարութեան իրա-
ւունքը տալ:

Ոչ առաջինն և ոչ երկրորդին:

Երկուքն էլ ունեն իւրեանց սխալ կողմերը:

Արդարեւ, ծերունի պապայի, այդ գերդաստանի
պատրիարքի, արթուն աչքը անդադար հսկում է
իւր ընտանիքի վերայ: Նա համարձակ մուտք չէ
տալիս սիրահինդի երիտասարդին սողալ իւր գեր-
դաստանի սրբարանում և կտկած, սիրտած օտար-
աղիք բաւերով քաղցրախօսել, սեղիկել իւր օ-
րիորդ թողնիկի, իւր մանկահասակ հարսի հետ,
և խելքից հանել նորանց: Այդ պատճառաւ, երի-
տասարդը վշտացնելով հեռանում է Հայի գերդաս-
տանից, նա այլ եւ չէ դառնում այնտեղ, որով-
հետեւ ծերունու հեղեղները նորան դուր չէին
գալիս, որովհետեւ նորա ընտանեկան շրջանի եր-
կայքը համապատասխան չէր նորա նպատակներին,
և ոչ գոյացողիչ նորա կրքերն ու պահանջները-
ներքին...

շարժման մէջ կինը մասնակցում էր: Նորա
դրութիւնը կամ լաւանում էր, կամ վատա-
նում, բայց նորա դերը միշտ յարմարվում
էր ժամանակի պահանջներին:

VI

Քրիստոնէութիւնը առաջին հասարակա-
կան վարդապետութիւնն էր, որ սկսեց քա-
րոզել կնոջ և մարդի բարոյական հաւատա-
րութիւնը: Այն երկիրները, որոնք քրիս-
տոնէութիւնը ընդունելուց յետոյ կարողացան
անխափան առաջ գնալ կրթութեան գործի
մէջ, ցոյց են տալիս մեզ, ինչպէս կինը ան-
դադար զարգանում է, բարոյապէս բարձրա-
նում է համապատասխան կրթութեան զար-
գանալուն:

VII

Հայաստանը այդ կողմից մի անաղղ եր-
կայթ է ներկայացնում մեզ: Երբ Հայաս-
տանում քրիստոնէութիւնը ընդունվեցաւ,
մենք տեսնք նորա բարեբար ազդեցութեան
հետեւանքները և կնոջ դրութեան վերա:
Մենք տեսնք, որ հայ կինը մարդի հետ
բարոյապէս հաւասարվելով, սկսեց մասնակ-
ցել թէ կրօնական, թէ ազգային շարժման
մէջ: Հինգերորդ դարի պատմագիրները նը-
կարագրում են մեզ, ինչպէս հայ կինը մաս-
նակից էր հայրենիքի կրօնական և ազգային
շարժման մէջ, ոչ թէ միայն լոկ համազ-
գացմունքով, այլ և իրապէս, հերոսական
գործերով և անձնազոհութեամբ:

VIII

Ի հարկէ այն ազգը, որ քանի մի դար
շարունակ անդադար կուսում էր զենքով, չար-
չարանքներով, նահատակութիւններով, ան-
ձնազոհութեամբ իր գոյութեան համար ի-

կրթեալ երիտասարդութիւնը պահանջում է հե-
ռացնել իւր կարծիքով, այդ ծերունի կերբերոս-
ները, անհետացնել նոցա խիստութեան խնարա-
րութիւնը և կատարեալ ազատութիւնը ներս տա-
նել Հայ ընտանիքի մէջ:

Շատ լաւ:

Սեբ նպատակ չունենի վիճել ազատութեան
սկզբի դէմ: Միայն կրկնում ենք, թէ մեր արդէն
տուկն փոքր ի շատէ ազատութիւն մի կնիկ-
ներին, բայց արինք նորա առաջին հարկի փա-
կուած դուռը, և թող տուկն նորան հրապա-
րակ ելանել իբրեւ մարդ, իբրեւ մարդկային անհա-
տական իրաւունքների բաժանորդ:

Բայց կինը ինչով արդէն աւելի պիտի առանձ-
նանորոշութիւնը:

Նա հանդիպեցաւ մեր կեանքի ասպարիզում,
ոչ իբրեւ մարդը, — գործունեայ, աշխատաւոր և կա-
րկից իւր տղամարդի հոգեբերին, այլ որպէս իւր-
ձիկ, կուսկէլ, զուքուած, զարդարուած մօզիկ
մազաղկների պաճուճանքներով, և իւր զէմբը
խարդախած արուեստական դեղերով...

Նա եղաւ իւր տղամարդի համար մի նոր տան-
ջանքի մեղեքնայ, մի նոր հողածութեան առարկայ:
Նա գերի արեց իւր տղամարդին, որ յառաջ նորա
վերայ խիստմէր, որոյ ինքը յառաջ ստորակն էր:
Արեւելեան կեանքի մէջ, ուր հայ կինը դեռ ապ-
րում է նահապետական շրջանում, ուր նա (որպէս
ոմանք մտածում են...) դեռ ստրուկ է իւր տղա-
մարդի և տան ծերունիի կաթին, կինը, ոչ միայն
անկեղծ մաքրութեամբ պահպանում է իւր բարոյա-
կան սրբութիւնը, այլ նա բաժանորդ է լինում իւր
տղամարդի հոգեբերին, նորա զբաղմունքներին, նա
իւր տղամարդի հետ ընդդաբար կրում է իւր վե-

րան շրջապատող անողորմ թշնամիների դէմ,
չէր կարող խողաղութեամբ զարգանալ և
քրիստոնէութեան սկիզբները իր մէջ ար-
դիւնաւոր կերպով իրագործել և զարգացնել:

IX

Պարսկերից յետոյ Հայաստանը նուաճ-
վում է Արաբացիներից... յետոյ թաթարնե-
րից... Հայաստանը ընկնում է մահմետական
ազդեցութեան տակ:

Հայը մահմետական դարեւոր ազդեցու-
թեան տակ, հաւատարմութեամբ պահելով
թէ եկեղեցու ծէսերը, թէ կրօնական զբաղ-
մունքը, քրիստոնէա մնալով, — այնու ամե-
նայիւ, իր կենսական երեւոյթների մէջ, իր
առօրեա յարաբերութիւններում, իր բարք
ու վարքի և հայացքների կողմից կրթվում է
մահմետական ոգով...: Նա լինում է
բռնաւոր ընտանիքի մէջ, մոլեռանդ և տն-
համբրող հասարակութեան մէջ, կորցնում
է եռանդը դէպի շարժում և նորութիւն,
յուսահատվում է, դառնում է խոնարհ... կի-
նը կրկին ստրկանում է...

X

Թէ հարուստ, թէ աղքատ գիւղական
ընտանիքում կինը աշխատող է, մեքենայա-
կան գործիչ է: Տան աղջիկը ամենից առաջ
քնից վեր է կենում, ամենից ուշ պար-
կում է, որ կարողանայ նորա վերա դրած
անային ծանր պարտաւորութիւնները կատա-
րել: Շատ տեղ կինը քողով ծածկում է
իր երեսը: Նա դառնում է բոլորովին կրա-
ւորական էակ: Գոնէ տղաները, գիւղաւորա-
պէս քաղաքներում, սովորում են այդպիսի տի-
րացուի մօտ, — աղջիկները բոլորովին անուս
են մնում, և առաւել են ենթարկվում շըր-

բայ ընտանիքի ապրուստի պիտոյքը հայթաթելու
հնարները:

Այնտեղ կինը կուկայ չէ, և ոչ կրթեալ երի-
տասարդութեան ցնորքների առարկայ: Այնտեղ
կինը ժիւր և գործունեայ տանտիկին է: Նա թը-
խում է իւր զաւակներին համար հաց, եփում է նո-
ցա համար կերակուր, լուսնում է նոցա լուսաբը,
կարում է նոցա հագուստը: Նա օգնում է իւր տը-
ղամարդին նորա հողերի մշակութեան մէջ, կա-
սում է նորա կալը, մաքրում է նորա ցանքերը ա-
ւելորդ խոտաբույսերէն: Նա օտար մարդի հետ
գործ չունի: Նա իւր սէրը, իւր սիրտը նուիրած
է իւր ամուսնին:

Բայց մեր քաղաքի ազատութիւն վայելող աղ-
ջիկ-պարտնը խոհանոցը չէ մնում, քրոջնետե կե-
րակուր եփելու համար խոհարարներ կային, նա
հաց չէ թխում, որովհետեւ կուս-փունջին միշտ պատ-
րաստ էր այդ սպաշտօնը կատարելու, նա հագուստ
չէ կարում, որովհետեւ այդ գերձակների գործ է:
Ուրեմն ինչ է չլինում նա:

Գիշերները վարում է զուարճութիւնների մէջ,
զարթնում է ժամը տասին, շատ անգամ տասնը-
կուսին, մի երկու ժամ հարկաւոր են նորան լուս-
ցուել, հագնուել և հայեւոյ առաջ երևալ կոկիւ:
Այնուհետեւ նա դուրս է գալիս փողոց, մազաղկնե-
րին աղցելութիւն գործելու, բուլբուլները չափե-
լու, պատերի վերայ ափիշաներ կարդալու և սի-
րուն տղերանց նայելու...

Այն կանանց ազատութեան հետեւեցը մեր կեան-
քի մէջ:

Հասարակական շրջանի ազդեցութեանը: Այսպէս տեսնում կ'ընդ մտանում է Հայերէն և խօսքում է Վրացերէն, Տաճկաստանում,—Տաճկերէն... և այլն:

XI

Այդ դրութեան մէջ է գտնուում Հայոց Հասարակութիւնը, երբ մեզանում երեւում են եւրոպական լուսաւորութեան առաջնները: Եւ ինչ երեւոյթ է ներկայանում մեր աչքի առաջ: Մարդ և կին տղետ, հասարակութիւնը անպատրաստ կրթութիւնը ընդունելու, տղամարդը այնքան անկիրթ, որ դեռ երկար ժամանակ ընդունակ չէ լինել, կողմից կրթութիւնը ընդունելուց յետոյ, ազդել միւս սեռի մտաւոր զարգացման վերայ:

Առաջ, բայց զարգացող քերականութիւնից, ու սարմախից և քանի մի հին մատենագիրներին հայը ուրիշ մտաւոր կերակուր չունէր:

Նա ինքը դժուարութեամբ էր մարտում այդ կերակուրը, իսկ կանանց սեռին դա բոլորովն մատչելի չէր:

XII

Հայը ոչինչ մտաւոր զարգացման միջոց չէր կարող ներկայացնել կանանց սեռին, որովհետեւ ինքը ոչինչ չունէր,— և երբ եւրոպական կրթութեան առաջն նշոյլները երեւցան, նա ժամանակ չունէր տղան կրթել, որ կարողանայ դաստիարակել կանանց սեռը... Հայ կանանց սեռը սկսեց սովորել, բայց ոչ թէ իր ազդի մարդիկներին ձեռքից ստանալով լուսաւորութեան միջոցները այլ անմիջապէս դրսի տարրերի ազդեցութեանը ենթարկեցաւ: Այն դասերի մէջ որտեղ կ'ընդ սկսեց կրթվել, նա սկսեց կրթվել եւրոպական լեզվով, եւրոպական ոգով: Ճշմարիտ է, որ կանանցից շատերը միայն կրթութեան արտաքին ձևերը ընդունեցին և ոչ թէ բովանդակութիւնը,— բայց այնուամենայնիւ առհասարակ աւելի լուսաւորվեցան քան թէ առաջ:

XIII

Մարդու կամքի դէմ, երօպական լուսաւորութիւնը սկսեց ազդեցութիւն ունենալ կնոջ վերա... և կ'ընդ հեռացաւ մարդից, կարծես այլ ևս չէր հասկանում նորան: Կինը օտար դառաւ մարդի ձգտումներին, հասկացողութիւններին, նպատակներին: Մարդը հայութեան վերա էր խօսում,— կ'ընդ չէր հասկանում նորան: Մարդը հայերէն էր խօսում,— կ'ըն ծիծաղում էր: Նա հայ է, բայց իր ուղղութեամբ նա տարբերվում է Հայոց Հասարակութեանց: Նորան ծանօթ չէ հայութեան հին անցեալը, նորան ծանօթ է միայն Հայի մօտիկ անցեալը, որը նորա համար անտանելի ստրկութիւն էր:

XIV

Նա, կարծես, կենդանի բոլոր է հայ մարդի անընդունակութեան, ազդի պատմական անցեալ թշուառութեան, պատմական պայմաններից առաջացած այն ստրկութեան դէմ, որին նա երկար ժամանակ ենթարկված է եղել...

Հայ կինը, կարծես, ասում է հայ մարդին «այն քիչ մաս լուսաւորութիւնը, որ ես ըստեցել եմ, վատ թէ լաւ ըմբռնելով, նորա տարրական սկիզբները,— ես ստացայ եւրօպական տարրից, և ոչ թէ քեզանից...»:

XV

Ամեն տեղ մարդը զարգանալով, մտաւորապէս ազդում է կնոջ վերա: Հայ արդեան հասարակութեան մէջ այդպէս չէ: Մարդի կամքի դէմ, առանց մարդի միջամտութեան կնոջ և լուսաւորութեան ազդելու մէջ,— հայ կինը անմիջապէս սկսում է լուսաւորութիւն ստանալ եւրօպական ազդերից...

Մարդը ուշացաւ իր բնական պաշտօնը կատարելու մէջ...: Նորա տեղը բռնած է: Ուրիշ, աւելի զարգացած տարրը նորա պաշտօնը կատարում է...

XVI

Եւրօպական լուսաւորութիւնը, ինչպէս ամեն ճշմարտութիւն, անողորմ է...

Հայ կինը յաղաթակեցաւ մեր անշարժութեան գրկից...

Եւ հայ ինչ ենք լուսւ ալը կնոջ բերանից, ոգու ազդու էիր, և ազդու լինելով դու ինձ պատահում էիր թէ նիւթական, թէ մատուր ստրկութեան մէջ,— այժմ երբ սկսում եմ լուսաւորվել, բայց քեզ պարտական չեմ այդ լուսաւորութեան նշոյլներով, այլ ուրիշին...

XVII

Մեր սեպհական յանցանքն է, եթէ կինը դառնում է մեզ օտար, նա դառնում է մեր հակառակորդ...

Ինչպէս անենք որ հաշտվենք նորա հետ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ն Ա Մ Ա Կ Ս Ղ Ն Ա Ս Ի Յ :

Առաջին նամակիս մէջ ասացի, որ Արմալու և Թէլաւի գաւառների գիւղերի բնակիչները երկու տարրերից են բաղկացած, նախկին կալուածատերերից և ժամանակաւոր ստրկներից («Մըշակ» № 10-ին)։

Կալուածատէրերը թէ և գրկվեցին ստրկներից, բայց այս հարուստ երկիրը մնաց համարեա թէ բոլորը նրանց ձեռքին։ Այս գաւառների միջամեծ անասունները, այգիները, պտղատու դառները և գիւղերի մօտ դառնաւ հողերից շատերը պատկանում են այժմ կալուածատէրերին։ Չընդունելով երկրի անհամեմատ հարստութեանը, կալուածատէրերը (բայց մի քանի բացառութիւններից) իրանց ծուրվեցան պատճառով դժուարանում են ապրուստի կոզմից։

Այն երկրասարդները, որոնք բայց ձի նստելուց և դէնք բանացնելուց ոչինչ չեն իմանում, որոնք շատ արեղակ օրի և լուսնիակ գիւղերն են ինչ անցկացրել այդու կամ պարտիկ ընկալելու տակ զենու տիկը կողքին դրած և հաղարկելու ու ջիւղվելու (եղջիւղներ) ձեռքին, կախելով կարմիր դիւնին կոնքիցով,— նրանք, որոնք ամենին հոգս չէին քաջութիւն թէ ինչպէս դառնալ աշխատանքներով է ստացվում այս կարմիր դիւնին և առհասարակ կանքի ամենահարկաւոր նիւթերը, նրանք ամենը պատրաստ էին տեսնում, և եթէ պատրաստ չէր լինում, նրանց միայն հարկաւոր էր հրամայել, որ պատրաստէին։ Այս այսպիսիներն էին, որոնք աշխատութիւնն ասած բառը չէին իմանում, թէ ինչ է նշանակում։ Ինչ էր պատճառը սրանց այնպիսի երբ գրկվեցին իրանց ստրկներից։ Ի հարկէ նրանց սպասում էր աղքատութիւնը։ Նրանք անուղղորդ լինելով, և մանաւանդ իրանց իշխանական ատրիանի համար մեծ անպատուութիւն համարելով քրտնոյլ և իրանց հալալ աշխատանքով հաց ուտելը, ստրկներից գրկուելուց յետոյ ամենին ուղարկութիւն չեն դարձնում իրանց երկրին, ու մի կարծ ժամանակ լվլվում են անհոգ կանք անցկացնելով, այն դուռներով որ ստանում են ըստ ստրկների աղատելու համար, բայց այս փողն էլ չուտով իրանց քաւիներից մասնում է Տիֆլիսում վաճառականների զանաւորները և իրանք մնում են ձեռք դատարկ։

Արեւին հասնում է այն միջոցը, երբ կալուածատէրերը ոչ մի տեղից պատրաստ աշխատանք չեն ստանում, երբ նախկին ստրկատէրերը մնում են այն կրթութիւնական դրութեան մէջ, երբ իրանք պէտք է քաշելին իրանց գլխի հոգը։ Բայց նրանք այս պատճառով, որ երկրից մասնաւոր վեր դալ և իրանք բաց անեն իրանց բերանը և ուտեն։ Բայց երբ երկրից մասնաւոր հատել էր,— էլ չէր թափվում։ Նրանք սկսեցին երկրից մասնաւոր պահանջել։ Պահանջում էին ամանագութիւնով մի և նոյն տարրից,— ժամանակաւոր ստրկներից, որը երկար ժամանակ էր նրանց կերակրել և պահպանել։

Բայց ստրկները արդէն լսել էին, որ իրանք ազատ են և այդ ազատ բառը շատ թանկ էին համարում իրանց համար և նրանք համաձայնում էին, որ էլ պարտաւոր չեն աշխատելու իրանց նախկին բարերարների համար։ Բայց ինչպէս հոգեբանները և անտեսները հաստատում են, ամանագութիւնը երկրիական միջոցները մարդի մէջ մեծ դերեր են խաղում,— ուրեմն և նախկին ստրկներին մէջ։ Ստրկները երբեք աշխատում են կալուածատէրերի համար աւանդութիւնով, և մանաւանդ նիւթական պատճառի համար, այն է, որ ժամանակաւոր ստրկներից դեռ ևս բոլորովն չեն աղատ իրանց կալուածատէրերից, դեռ ևս նրանք յարա-

բերութիւն և կախումն ունենին իրանց կալուածատէրերից։ Բայց այս կախումը օրէց օր թուլանում է, կալուածատէրերը չեն բաւականանում իրանց եկամուտով և միշտ աղքատանում են, որը նիւթական պահանջարկներից և շատերն էլ չուտելով թիւնից։

Այն պտղաբեր երկրները, որ մնացած են կալուածատէրերի ձեռքին, անհաշի ընկած են, իրանք չեն մշակում, վարում, ցանում։ Իսկ ժամանակաւոր ստրկներին էլ էնքան օգուտ չէ կալուածատէրերի պայմանով (բարով) երկիրը ցանել։ Այն միլլիոնները, որ նրանք ստացան ստրկներից աղատելու համար, գործ դրին զլխաւորապէս չուտելու համար, նորա փողովցին առ ժամանակ և թողին թիֆլիզում վաճառանոցներում։ Իսկ իրանք յետ դնացին գիւղը ձեռները դատարկ ու իրանց կալուածները մշակելու համար ոչ մի կոպէկ չը տարան իրանց հետ։ Վերջը թէպէտ սրմնացի մի քանիները իրանց գլխի հոգը տեսնել սկսել են, բայց փոխանակ նստելու գիւղերում և օրինաւոր հողագործութիւն անելու, սխաւմ են բոլորը միայն գինեւաճառութեան ետեից ընկնել։— Նրանք սկսում են բաց անել այստեղ այնտեղ գինեւանք, և փոխանակ մի երկու երեք այսպիսի գինեւանքի, որ բաւական էր սրանց համար, որ եթէ կաղմէին սրանք մի վաճառականական ընկերութիւն, իսկ միւս աղատ ձեռները, փոխանակ թիֆլիզում պարապ նստելու գիւղում պարապէին հողագործութեամբ, նրանք կարծես թէ բոլորն էլ իրանց փրկութիւնը գտնում են վաճառականութեան մէջ և ձգտում են դէպի բուրգուական ուղղութիւնը, արհամարհելով արդիւնաբերութիւնը։ Կալուածատէրերից շատերն էլ ամանային ժամանակ աշխատում են չուտով ժողովել իրանց կալուածներից եկամուտները,— կաղմում են մի փողրիկ դուռնու զանազան միջոցներով և էլ չեն դործ դնում երկիրը բարեբաղէս մշակելու համար, այլ չուտով իրանց անձը տալիս են մի ժամանակ, թիֆլիզում հիւրանալ բուրգուին, ամէն օր մաշում են քաղերը, ի հարկէ իրանց նախնիներից աւանդած հողատններով և դէնքով, իսկ իրանց հետ բերած վերոյիշեալ դուռնու գործիչ է դառնում զանազան միջոցների և չուտելութեան։

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Գ Ո Ւ Ի Յ :

II

Այդ քաղաքի Հայերի մէջ յառաջագիւղութեան չարժանիք Մարդասիրական Ընկերութիւնն է, որի նպատակն է ըստ իւր կոչման օժանդակել իւր կալուածութեան չափ իւր ազդի երկսեռ մանուկներին բարոյապէս և մտաւորապէս։ Այդ ընկերութիւնը հաստատուած է յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչին ի 21 մայիսի 1864 ամի Բարձրագոյն հրահանգով Օգոստոսիան Վայոցքի։

Սկզբում եղել են հիմնադիր անդամք ինն անձներ։ Այժմ անդամներ թիւը 50-ից աւել է, որոնցից, անդամաց համաձայնութեամբ, ընտրված են ի 25 յունվարի 1870 ամի գործակաւոր անձներ ութ, երեք տարի ժամանակաւ, որ կառավարեն ընկերութեան խորհրդոց գործերը։

Գործակաւորների գործը երկու տարեկան ընթացքում եղել են հետեւեալը։—

Բարեկարգել օրիորդաց ուսումնարանը։ Ուր ուսանողները ուսանում են գրել ու կարդալ հայկական և ռուսական լեզուներով, ուսանում են ձեռագործութիւն, երգեցողութիւն և անտեսական կառավարութեան սկզբները։ Եւ համաձայն ցանկութեան և միջնորդութեան անդամաց մտցրել են ուսումնարանը Վեհափառ Կաթողիկոսի հովանաւորութեան տակ։

Բացել են մի տղարան, որ ունի երկու ընտիր մանուկներ, նորաձոյլ տառերով հայերէն, ռուսերէն և թուրքերէն։ Գրած աշխատում են աւելի ևս բարելոյրել ուղարանի վիճակը, այն նպատակով, որ տղապարտներն և բաժանորդներ կամ ձրի կամ շատ էծան գնով աղքատի ուսումնարանները հարկաւոր դատարները, և այլ աղքատու, ուսումնական պատմական, ձեռագիր և հագուստիւ տարաբարձ գրեանք։ Հոգս են անում բերել տալու և էլ միւսանից տղապարտան նորաձոյլ տառեր։

Բացել են դրաղարան, որի մէջ գտնվում է արդէն զանազան ձեռագիրներ, հին ու նոր տպագրուած գրքեր և օրագրութիւններ Հայոց, Ռուսաց և այլ եւրոպական լեզուաց, որոց թիւը առ այժմ հասնում է մինչև 1,000։ Լինում են Բաղդում և ուրիշ քաղաքներից գրեանք նուրբարեւութիւնները դրաղարանին։

Այժմ ընդունած են չորս հայ երկրասարդներ, *) Տես «Մշակ» № 12, պ. թղթակցից ուղարկել է միջ գործակալ մի նամակ, որից քաղում ենք յետագայ տարիք, «անցեալ նամակումս «Մարդասիրական Ընկերութիւն» տարաւ ժամանակը հիմնադրել անդամների թիւը յիշած եմ 9 ժողովական 13-ի որոնց չորսն աւելացած են եղել կանանաւորութեան հաստատութիւնը յետոյ»։

որոնցից երկուսը (Համախելի) ուսանում են Բաղդադի գիմնազիում։ Երրորդը Մոսկուայում և չորրորդը Ս. Պետերբուրգ, ստանալով իրանց կառավարութեան մասին յայտնի դուռնու Մարդասիրական Ընկերութեան զանաւորները։

Օգնում է ընկերութիւնը տեղական ծխական (թիմական) ուսումնարանի ծախսին, վճարելով նրանակալ դուռնու, որպէս զի հայերի աղքատ զաւակները կարողանան յառաջագէտ լինել իրանց ուսման ընթացքում։ Բացի դրանից տալիս է ձրիարար և չքուր ուսանողաց դասադրքեր։

Ընկերութեան զանաւորներից գտնվում է իւրաքանչիւր տարի Յայտնութեան ու սուրբ Յարութեան օրերում Բագուայ այրեաց, աղքատ ու անանկ հայերին սահմանած դուռնու։ Չեն մոռացվում և այլազոր կամ եկաւոր աղքատները։

Նշանակված է ընկերութեան զանաւորներից իւրաքանչիւր տարի Համախելի նորաբաց ուսումնարանի դպրութեան օժանդակելու և յոտով կաղաւորելու դրամական գումարով։

Խնդրելով Վեհափառ Գեորգ Գ. կաթողիկոսից ստացել է լուծումն նորակաւոյց եկեղեցւոյ բաւկում կառուցանել շինութիւններ, որոնց մէջ գիտեղելու ծխական որ և թիմական և օրիորդաց ուսումնարանները, սպարանք, դրաղարան և առաջնորդարանը։ Երկրորդին մեծ մասով վերջացած է, ուր ուսանում են արդէն տղայք։ Եւ մընացեալ թերութիւնները կը լրանան չուտով։

Ընկերութեան օժանդակութիւնով ու ձեռնուրուակմամբ էլ չորս անգամ յիշեալ շինութեան ընդարձակ դաշլիքի մէջ խաղացել են Հայկական Թատրոն ուսանող երկրասարդները։

Կիւր գործնից աւելի արդիւնաբեր գործերի յուսալի է ընկերութիւնից, որ ժամանակին աշխատելու է ըստ կարողութեան երկրասարդներ ուղարկել արտասահման արհեստ ուսանելու, զգալով, որ դրանից կը ծնան ժամանակաւ ոչ թէ միայն մի քանի անհատներ օգուտը, այլ շատեր։

Սէր է նշանակում ընկերութեան մէջ, և համակրութիւն դէպի իրանց նախագահը։ Եթէ մարդիկ սկսեն իւրաքանչիւր համակրութիւն առ մի միանա, միաբանութիւն, համաձայնութիւն, կամեցողութիւն, աշխատասիրութիւն և գործակաւորութիւն։

III

Տեղա նոյնպէս ամեն քանի թանգութիւն է։ Երկու օրով յառաջ, մինչև մեր Բագու մանկը, մի այնպիսի սաստիկ ծիւղախառն քամի, բուր բորան է եղել, որ բնակիչները հաղիւ թէ կարողացել են տանից դուրս դալ իրանց գործի համար։ Համարեա կաշկանդուած մնացել են մարդիկ տան մէջ։ Անհրաժեշտ գործի տէր մարդիկը անգամ թողել են նոյն օրը իրանց գործերը, որից օգուտ կամ վնաս պէտք է ստանալին։

Կալում է թէ Պարսկաստանում, ումանք ստանալ Սպահանում, ժամադիր են երեւում։ Սոքն էլ ի հարկէ դեռ իւր ներգործութիւնը կունենայ անուշտ։

Անցեալ օրը ներկայ էի յարգապատիւ Մոսկու Զոհրապետցից—Ընկերութեան նպարն Նախագահին, նա առաջարկեց ինձ կարդալ մի նամակ, որ իւր բարեկամներից մէկն էր գրել իրան Գուրայից ամսույ 18-ին։ Նորա մէջ գրուած էր հետեւեալ լուրը։—Աղաքացի պարոն Գասպարեան Ալեք. սանեանի մանք, որ վերաբնակ էր Ղուբայում իւր առեւտրական գործերի մասին։ Որպէս թէ կոտիկ է նա իւր կենդանութեամբ ամենից առաջ իւր ամուսնոյն 15,000 մանէթ և տան կայքը։ Իւր թաղման համար ծախք և տուրք 1,000 մանէթ։ Իւր երկու քղերին իւրաքանչիւրին 3,000 մանէթ։ Երբօրը 5,000 մանէթ։ Միւս քրոջ երեխաներին 500 մանէթ։ Իւր հանգուցեալ եղբոր պարտքի համար 500 մանէթ։ Պատուիրել է իւր կնոջը բաժանելու աղքատաց 1,500 մանէթ։ Բագուայ Մարդասիրական Ընկերութեան օրիորդաց ուսումնարանին 2,000 մանէթ։ Ղուբայու ուսումնարանին 500 մանէթ։ Խաչեմով գիւղի համար 1,500 ման, ուր պիտոյ է ուսումնարան բաց անել և այդ փողով տոկոսով կառավարել նրան։ Երեսնու ուսումնարանին 2,000 մանէթ։ Ալեք. Զոհրապետցի ուսումնարանին 2,000 մանէթ։ Դուրայու Գաղանչեանց եկեղեցւոյ շինութեան համար 1,000 մանէթ։ Բանկում գործի 1,000 ման, որոյ տոկոսով տալին մի անգամ պատարագ մատուցանել յիշեալ Գաղանչեանց եկեղեցւոյ իւր հոգւոյ համար, 1,000 մանէթի տոմսին մնաց զանաւորների մօտ։ Նոյն նպատակով Ղուբայու եկեղեցւոյ 500 մանէթ։ Այս գործերի կառավարչին շնորհութեան վարձ է նշանակել 5,000 մանէթ։ Թէ և յիշեալ պարոնի մանք տրութեան առիթ է շատ սրտերի, սակայն, իւր կենդանի գործը կրթութեան նոյնպէս շատերին *)։ Փետր. 25-ին 1872 թ. Զոհրապետցի Գաղանչեանց։

*) Մասնաւոր նամակից տեղեկանում ենք, թէ երբ կառավարաններից մէկը առաջարկեց հան-

1944

